ելիի ածիլոելը նոյնպէս մի նորութիւն էր: Նա մօրուք չէր սիրում, բայց եւ երեսը խիստ հազիւ անգամ էր ածիլում: Այդ էր պատճառը, որ ածիլոելուց յետոյ նրա դէմքը ստանում էր երկու գոյն՝ մազերից ազատ տեղերը՝ մուգ-աղիւսագոյն, իսկ մազերով պատած տեղերը՝ բաց-աղիւսագոյն: Նայելով օրոայ ժամանակին, եղանակին, նայելով թէ նա խմած էր, թէ զգաստ էր, Սիմոն պատոելիի դէմքը, հնդկահաւի դէմքի նման, զանազան գոյներ էր ստանում: Այս երեկոյ լերդագոյն էր, որովհետեւ Այգեստանի փողոցում արաղի կաթսայի հետ խիստ մտերմական յարաբերութիւններ էր ունեցել: Իր հանրածանօթ մուգ-դեղնագոյն սերթուկի փոխարէն հագած ունէր կինամոնի գոյնով մի կարճ պալտո, որի վրայ փաթաթել էր շալէ հաստ գօտին: Ֆէսը նոյնպէս նոր էր, եւ փունջի ծայրը երեւում էր գլխի փաթեթի տակից: Անփոփոխ մնացել էր միայն նրա երեւելի վարտիքը, որը իր սովորական տեղից, այսինքն սրունքներից՝ մի թիզ բարձրութեան վրայ էր կանգնած: Ոտքի թաթերից սկսած մինչեւ վարտիքի ծայրը, այդ ընդարձակ տարածութիւնը, մնացել էր մերկ, որովհետեւ Սիմոն պատոելին սովորութիւն չունէր ամառը գուլպայ հագնելու: Մերկ սրունքները երեւում էին: Բայց կեղտը այնպիսի թանձր խաւ էր դրել նրանց վրայ, որ այդքանն էլ բաւական էր իբրեւ ծածկոց ծառայելու:

Ահա այդ գարշելի մարդն էր, որ հանդիսաւոր կերպով ներս մտաւ, լուռ գլուխ տոեց, կանգնեց պատի մօտ: Նրա աջ եւ ձախ կողմերում շարոեցաւ երգեցիկ խումբը: Նայելով այդ անմեղ արարածների վրայ, իմ սիրտը դողում էր: Որպիսի՜ ճիւաղի ձեռքում էր յանձնուած նրանց դաստիարակութիւնը... Տիրացուների նման նրանք հագած ունէին ժամի շապիկներ, եւ իւրաքանչիւրը ձեռքում բռնած ունէր փոքրիկ, կոթաւոր զանգակներ, որ հայոց եկեղեցիներում, երգեցողութեան ժամանակ, ածում են երկաթեայ ձողերով, եւ գործադրւում է իբրեւ նոագարան:

Փաշան բարեհաճեց հարցնել պատոելիի առողջութիւնը եւ, դառնալով դէպի Ասլանը, ասաց.

— Դա մեր հայոց դպրոցի վարժապետն է, իմ առանձին խնամակալութեան ներքոյ եմ ընդունել նրա դպրոցը:

Առաջնորդը աւելացրեց.

— Շատ իմաստուն մարդ է:

— Ճանաչում եմ, — ասաց Ասլանը սառն կերպով:

Սիմոն պատոելին, ոգեւորած իր երկու մեծ բարերարների գովասանքներից, նշան տոեց, աշակերտները միաձայն եղանակեցին առաջնորդի սիրելի երգը.